նակին անցելոյն որում տուեալ էր նմայ յառաջնում։

## ԳԼՈՒԽ ՂԴ.

'Ի միջոց երից ամաց ժամանակի 'ի պատճառէ մեռանելոյ, և կամ 'ի պատճառէ մեղաց իւրոյ անկանելոյ նախարարն 'ի պաշտօնէ 'ի տեղի նորայ մտցի երկրորդ խորհրդակիցն, և ընկալցի հրովարտակ պաշտօնատարութեան 'ի տանէ հայոց ըստ Օրինօք, պատուեսցի մէնջ հայոց պաշտօնատար նախարարութեան որպէս 51 երորդ յօրէնս, ելանելով երկրորդ խորհրդակիցն 'ի տեղէ խորհրդակցութենէ առ 'ի պաշտօն նախարարութեան մնալով աթոռ նորայ դատարկ, յայնժամ 'ի վեր ելցեն ամենայն խորհրդակիցք ըստ իւրաքանչիւր աստիճանի մի աստիճան 'ի վեր և 'ի տեղի երեքտասան աստիճանին որ մնասցէ դատարկ ընտրեսցի այր ոմն նոր 'ի տանէն հայոց և հրովարտակաւ մուծցէ առ 'ի տեղի երեք տասան երորդ աստիճանն խորհրդակցութեան զի գտցի լրումն երկոտասան խորհրդականաց միշտ անպակաս։

## ԳԼՈՒԽ ՂԵ.

'Ի պատճառէ մահու և կամ 'ի գործոց ձեռաց մեղաց եթէ անկցի խորհրդակից ոմն 'ի տե-